

ԱՆԱՆՈՒՆ ԵԴԵՍԱՅԻՆ ԵՎ ԻՐ «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»

Ասորական պատմագրական հուշարձանները արժանահավատ սկզբնաղբյուրների համբավ են վայելում Մերձավոր արևելքի միջնադարյան պատմությամբ զբաղվող մասնագետների շրջանում: Իրանի, Բյուզանդիայի, Արաբական խալիֆաթի և սելջուկյան ամիրայությունների պատմության ուսումնասիրման հետ կապված շատ խնդիրներ իրենց լուսաբանությունն են գտնում շնորհիվ այդ աղբյուրների: Նրանք մեծ արժեք են ներկայացնում հատկապես այն տեսակետից, որ հայկական աղբյուրների կողքին հակակշռում են մահմեդականների ու խաչակիրների աչառու պատմագրությանը: Դժվար է գտնել Մերձավոր արևելքի երկրների միջնադարյան պատմությանը նվիրված որևէ լուրջ հետազոտություն, որտեղ օգտագործված շիինեն ասորական ժամանակագրություններն ու պատմությունները:

Սովետական պատմագիտության մեջ ասորական աղբյուրների գնահատման և արժեքավորման գործում մեծ վաստակ ունի Ն. Վ. Պիգուլևսկայան, որն իր ուսումնասիրություններում հիմնավոր կերպով վեր է հանել բազմաթիվ հուշարձանների գիտական նշանակությունը: Հայագիտությունը նույնպես անմասն չի մնացել այդ գործին: Դեռևս 1934—1935 թթ. «Բազմավեպ» հանդեսում լույս տեսավ VI դ. ասորի պատմագիր Հովհան Եփեսացու «Եկեղեցական պատմության» III մասի հայերեն թարգմանությունը՝ կատարված գերմաներենից¹: 1969 թ. Ն. Տեր-Մինասյանը հրատարակեց «Եդեսիայի ժամանակագրության» ասորերենից թարգմանված հայերեն բնագիրը²: Իսկ 1976 թ. «Յոթ աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի 8-րդ գրքում Հ. Մելիքոնյանի թարգմանությամբ լույս տեսան ևս չորս ասորական աղբյուրներ՝ Մշիխա Զեխայի «Ադիաբենի պատմությունը», Կեղծ-Յեսու

¹ Հովհաննես Եփեսացի (եպս.), *Եկեղեցական պատմություն*, «Բազմավեպ», 1934, էջ 52—59, 211—215, 266—273. 1935, էջ 4—7:

² Ն. Տեր-Մինասյան, *Եդեսիայի ժամանակագրությունը*, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 175—188:

Սյունակյացի և Կեղծ-Չափարիա Միտիլենացու «Ժամանակագրությունները», ինչպես նաև Հովհանն Եփեսացու «Եկեղեցական պատմության» պահպանված մասերը³: Ներկա հրատարակությամբ հայ պատմաբանների տրամադրության տակ է դրվում մի ուրիշ ասորական աղբյուր, որը, հուսով ենք, իր նպաստը կբերի հայ ժողովրդի պատմության գանազան հարցերի ուսումնասիրման գործին:

Անանուն Եղեսացու «Ժամանակագրության» միակ ձեռագիրը հայտնաբերվել է 1899 թ. Կոստանդնուպոլսի մասնավոր հավաքածուներից մեկում: Հետազոտողների կարծիքով, ասորական այդ ձեռագիրն ընդօրինակվել է XIV դարի վերջերին: «Ժամանակագրության» առաջին հրատարակությունը, որը մնացել է անավարտ, իրականացվել է 1904—1911 թթ., կաթոլիկ ասորիների պատրիարք Իգնատիոս Եփրեմ II Ռամմանու կողմից⁴: Ամբողջական բնագիրը լույս է տեսել 1916—1920 թթ., երկու հատորով, նշանավոր ասորագետ Ժ.—Բ. Շաբոյի աշխատասիրությամբ⁵: 1937 թ. Ժ.—Բ. Շաբոն հրատարակել է «Ժամանակագրության» առաջին հատորի լատիներեն թարգմանությունը⁶, առաջաբանում խոստանալով իրականացնել նաև երկրորդ հատորի թարգմանությունը: Սակայն այդ գործն անկատար է մնացել:

1946 թ. Ն. Վ. Պիգուլևսկայան իր «Բյուզանդիան և Իրանը VI—VII դդ. սահմանագլխին» աշխատության հավելվածում տվել է Անանուն

³ Ասորական աղբյուրներ, Ա. Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Մելրոնյանի, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 8, Իրևան, 1976:

⁴ Chronicon civile et ecclesiasticum anonymi auctoris, quod ex unico codice edesseno primo edidit *Ignatius Ephraem II Rahmani*, fasc. I—II, Šarfet, 1904, 1911.

⁵ Chronicon ad annum Christi 1234 pertinens. I. Edidit *J.—B. Chabot*, Praemissum est Chronicon Anonymum ad A. D. 819 pertinens. Curante Aphram Barsaum. „Corpus Scriptorum Christianorum Orientalium (=CSCO)“ 81, Syr. 36, Louvain, 1920 (*այսուհետև՝ Chabot—I*). Anonymi auctoris chronicon ad annum Christi 1234 pertinens. II. Edidit *J.—B. Chabot*. „CSCO“ 82, Syr. 37, Louvain, 1916 (*այսուհետև՝ Chabot—II*).

⁶ Anonymi auctoris chronicon ad annum Christi 1234 pertinens. I. Praemissum est Chronicon Anonymum ad A. D. 819 pertinens. Interpretatus est *J.—B. Chabot*, „CSCO“ 109, Syr. 56, Louvain, 1937 (*այսուհետև՝ Chabot—III*). *Ժամանակագրության առաջին մասի մի համառոտված ֆրանսերեն թարգմանություն էլ դեռևս 1907 թ. ձեռնարկել է ֆրանսիացի արևելագետ Ֆ. Նոն, բայց այդ գործը անավարտ է մնացել. տե՛ս F. Nau, Traduction de la chronique syriaque anonyme, éditée par Sa Béatitude Mgr Rahmani, patriarche des Syriens catholiques, „Revue de l' Orient chrétien“, 2^e série, t. II (XII), Paris, 1907, p. 429—440. t. III (XIII), 1908, p. 90—99, 436—443.*

Եղեսացու երկի առաջին հատորի 76—125 գլուխների ուսերեն քարգմանությունը, որոնք վերաբերում են Մավրիկիոս կայսեր գահակալումից (582 թ.) մինչև Հերակլիոսի մահն (641 թ.) ընկած ժամանակահատվածի իրադարձություններին⁷: «Անսնուն ժամանակագրությանը» Ն. Վ. Պիգուլևսկայան որոշ տեղ է հատկացրել նաև նույն գրքի աղբյուրների տեսության բաժնում⁸:

Հայտնի են «ժամանակագրության» երկրորդ հատորից կատարված մի քանի մասնակի և հատվածական քարգմանություններ⁹: Դրանց շարքում կարևոր տեղ է զբաղեցնում Ա. Տրիտոնի իրագործած անգլերեն քարգմանությունը, որն ընդգրկում է առաջին և երկրորդ խաչակրությանը վերաբերող հատվածները: Այդ քարգմանությունը նշանակալից է նրանով, որ հիմք է ծառայել խաչակրաց պատմության համարյա բոլոր ժամանակակից հետազոտողների (Ռ. Գրուսե, Ս. Ռանսիմեն, Ա. Լյուդերս և այլն) ուսումնասիրությունների համար: Օգտվելով Ա. Տրիտոնի քարգմանությունից, Ռ. Գրուսեն իր «Խաչակրաց պատմության» երկրորդ հատորի հավելվածում տվել է նաև եղեսիայի կոմսությանը վերաբերող տվյալների մանրամասն վերաբնագրությունը¹⁰: Ա. Տրիտոնի հրապարակումը մեզ համար նաև առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ Հ. Քյուրտյանի կողմից այն ամբողջությամբ քարգմանվել է հայերենի և լույս տեսել առանձին գրքույկով՝ «Առաջին և երկրորդ խաչակրությունները ըստ Սիրիացի անանուն ժամանակագրի մը» խորագրի տակ (Բոստոն, 1936):

1974 թ. լույս տեսավ երկրորդ հատորի ամբողջական ֆրանսերեն քարգմանությունը, կատարված Բաղդադի համալսարանի պրոֆեսոր Ալբերտ Աբունայի կողմից¹¹: Ներածության, ծանոթագրությունների և

⁷ Н. В. Пигулевская, Византия и Иран на рубеже VI и VII веков, М.—Л., 1946, стр. 252—289.

⁸ Նույն տեղում, էջ 48—49:

⁹ Sch' u J.—B. Chabot, Un épisode de l'histoire des Croisades, „Mélanges offerts à Gustave Schlumberger“, vol. I, Paris, 1924, pp. 169—179 [Զանգրիի կողմից եղեսիայի առման գրված թարգմանությունն է]։ The First and Second Crusades from an Anonymous Syriac Chronicle, translated by A. S. Tritton, with Notes by H. A. R. Gibb, „The Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland“, 1933, p. 69—101, 273—305. A. Rücker, Aus der Geschichte der Jakobitischen Kirche von Edessa in der Zeit der Kreuzfahrer „Oriens Christianus“, Bd. 32, S. 124—139, Leipzig, 1935 (Աղբյուրի մասնակի փոխադրությունն է):

¹⁰ R. Grousset, Histoire des Croisades et du royaume franc de Jérusalem, t. II, Paris, 1935, p. 866—886.

¹¹ Anonymi auctoris chronicon ad A. C. 1234 pertinens. II. Traduit par

ցանկերի հեղինակն է ասորագետ ժ.—Մ. Ֆիեն: Ա. Աբունայի բարգմանությունն աչֆի է բնկնում նշգրտությամբ և լիովին կարող է բավարարել արդի պատմագիտության պահանջները: Հազվադեպ աննշտությունների և բացթողումների մասին խոսք կլինի սույն աշխատության համապատասխան ծանոթագրություններում:

Ինչ վերաբերում է ժ.—Մ. Ֆիեի ներածությանը, ծանոթագրություններին և ցանկերին, ապա դրանք իրենցից ներկայացնում են աղբյուրագիտական տվյալների այն ամբողջությունը, որն անհրաժեշտ է ցանկացած պատմական սկզբնաղբյուրի մատուցման համար: Ծանոթագրությունները, սակայն, շատ համառոտ են և շոշափում են երեք հիմնական խնդիրներ. պատմական անձանց անունների նշգրտում, «ժամանակագրության» և այլ սկզբնաղբյուրների (Մատթեոս Ուռհայեցի, Միֆայել Ասորի) զուգահեռ դրվագների բացահայտում և, վերջապես, բնագրական աղավաղումների վերլուծում, որը ժ.—Մ. Ֆիեն ֆաղել է ժ.—Բ. Շարոյի հրատարակությունից: Ցանկերում արտահայտված են Անանուն Եղեսացու «ժամանակագրության» երկու հատորների պատմական, տեղագրական և աղբյուրագիտական տվյալները: Ինֆնուրույն պատմաբանասիրական արժեք է ներկայացնում ժ.—Մ. Ֆիեի ներածությունը, որտեղ թեև համառոտ, բայց հիմնավոր բնության են ենթարկված «ժամանակագրության» հեղինակին, ժամանակին և աղբյուրներին վերաբերող խնդիրները¹²: Դժվար է պատկերացնել որևէ հետազոտումնասիրություն, որտեղ այս կամ այն չափով չկրկնվեն այդ ներածության էզրահանգումները:

* * *

Հետևելով ասորական պատմագրության ավանդույթին, Անանուն Եղեսացին իր երկր կազմել է երկու ինֆնուրույն մասից՝ Եկեղեցական և ֆաղաֆական ժամանակագրություններից, որոնք բաժանված են բարձրագույն փոփոխված գլուխների¹³: Մեզ հասած ձեռագրում Եկեղեցական ժամանակագրությունը հաջորդում է ֆաղաֆական ժամանակագրությանը, թեև սկզբնապես, ամենայն հավանականությամբ, նախորդել է նրան: Նման կարծիքի համար հիմք է տալիս այն հանգամանքը, որ ֆա-

Albert Abouna. Introduction, notes et index de J.—M. Fiey, „CSCO“ 354, Syr. 154, Louvain, 1974 (այսուհետև՝ Abouna-Fiey).

¹² Անանուն Եղեսացու «ժամանակագրության» մասին տե՛ս նաև Ռ. Հուսեյնովի համառոտ ծանոթությունը. *Р. А. Гусейнов, Сирийские источники по истории Закавказья X—XIV веков, «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 2, էջ 51—52.*

¹³ Գլուխների համարակալումը կատարվել է հետադարձ մի անփույթ գրչի կողմից:

դաժան ժամանակագրության մեջ տեղ-տեղ վկայակոչված են եկեղեցականի գանազան դրվագները:

Անանուն Եղեսացու երկր, միջնադարյան այլ տիեզերական պատմությունների նման, ընդգրկում է պատմական մի անսահման ժամանակաշրջան: Այն սկսվում է Ադամ ու Եվայից և հասնում մինչև մ. թ. 1230-ական թթ.: Չեռագրի ֆայֆայվածության պատճառով ֆաղաֆական ժամանակագրությունն ընդհատվում է 1234 թ. դեպքերի նկարագրությամբ: Շատ ավելի մեծ կորուստ է կրել եկեղեցական ժամանակագրությունը, որը թերի է և՛ սկզբից, և՛ միջից, և՛ վերջից: Մեզ հասած վիճակում այն սկսվում է VI դ. 40-ական թվականներով և ընդհատվում 1207 թ. իրադարձությունների նկարագրությամբ:

Եկեղեցական ժամանակագրության մեջ դեպքերը շարադրված են հակոբիկյան եկեղեցու առաջնորդների՝ Անտիոքի պատրիարքների հաջորդականության համեմատ: Մանրամասն նկարագրված են յուրաքանչյուր պատրիարքի օրոք տեղի ունեցած բոլոր կարևոր իրադարձությունները: Չգալի տեղ է հատկացված եկեղեցու ներքին կյանքին, հերձվածողական շարժումներին, միջեկեղեցական հարաբերություններին և այլն: Հեղինակը հանգամանալից կերպով անդրադառնում է Հուստինիանոսի եկեղեցական ֆաղաֆականությանը, որի նպատակն էր երկաթնակության և միաբնակության հակասությունների մեղմացումը և Բյուզանդական կայսրության գաղափարական միասնության ապահովումը: Այս առիթով Անանունը մանրամասն տեղեկություններ է հաղորդում նաև Թեոդորա թագուհու գործունեության մասին, մի բան, որ լիովին հասկանալի է, քանի որ փաստորեն այդ թագուհու օժանդակությամբ էր, որ Հակոբ Բարադեսու Եպիսկոպոսը կարողացավ VI դ. կեսերին հիմնավորապես վերափոխել և ամրապնդել ասորական միաբնակ եկեղեցու կառուցվածքը:

Եկեղեցական ժամանակագրությունն աչֆի է ընկնում ծայրահեղ հակաֆաղեղոնական բնույթով: Այդ պատճառով հեղինակը երբեմն անդրադառնում է նաև ֆաղեղոնական եկեղեցու ներքին կյանքի իրադարձություններին: Հանախակի են նաև հայոց եկեղեցուն վերաբերող տեղեկությունները, որոնք, սկսած XII դ. երկրորդ կեսից, ստանում են կանոնավոր բնույթ, այսինքն՝ Անանունն արձագանքում է այդ շրջանի բոլոր կարևոր իրադարձություններին, մասնավորապես հայ կաթողիկոսների հաջորդականությանը: Անանուն Եղեսացու տեղեկությունները, այդպիսով, զգալի արժեք են ներկայացնում հայոց եկեղեցու և հայ-ասորական եկեղեցական հարաբերությունների պատմության ուսումնասիրման համար:

Ինչպես ասվեց, ֆաղափական ժամանակագրությունը մեզ է հասել ավելի անադարտ և ամբողջական վիճակում և այդ պատճառով արժանի է ավելի մանրամասն քննության: Այն պայմանականորեն կարելի է բաժանել հինգ մասի. ա) մարդկության նախապատմությունից մինչև Ալեքսանդր Մակեդոնացի, բ) Ալեքսանդրից մինչև Քրիստոս, գ) Քրիստոսից մինչև արաբական նվաճումները, դ) արաբական նվաճումներից մինչև սելջուկյան արշավանքները, ե) սելջուկներից մինչև մոնղոլները:

Առաջին մասը¹⁴, շնայած իր զգալի ծավալին, որևէ հետաքրքրություն չի ներկայացնում, քանի որ սուկական վերաբաղումներն է աստվածաշնչական հայտնի դրվագների: Բաբելոնին, Ասորեստանին և հին Պարսկաստանին վերաբերող պատմական տեղեկությունները նույնպես հիմնականում ֆաղված են Աստվածաշնչից:

Երկրորդ մասն¹⁵ ընդգրկում է Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումների, սելևկյան տիրապետության և Հռոմեական կայսրության սկզբնավորման ժամանակաշրջանը: Պատմությունը շարադրված է շատ բուցիկ կերպով և նույնպես ամբողջովին զուրկ է որևէ պատմական արժեքից, եթե չհաշվենք Եդեսիա ֆաղափին վերաբերող առանձին հետաքրքիր տեղեկությունները: Տպավորությունը գուցե մի փոքր այլ լիներ, եթե այս մասից չպակասեին մի շարք բերքեր:

Ավելի հանգամանորեն են շարադրված մյուս երեք մասերը: Քրիստոսից մինչև արաբական նվաճումներն ընդգրկող ժամանակաշրջանի իրադարձությունները¹⁶ Անանուն Եդեսացին նկարագրում է հռոմեական և բյուզանդական կայսրերի ժամանակագրության հիման վրա՝ ներհյուսելով նաև սասանյան արքաների հաջորդականությանը վերաբերող տվյալները: Մեծ տեղ է հատկացված Եդեսիայի Աբգար Ուֆամա թագավորի և Քրիստոսի անվավեր թղթակցության պատմությանը, Կոստանդին I կայսեր (324—337 թթ.) եկեղեցական ֆաղափականությանը, Հուլիանոս կայսեր (361—363 թթ.) հակաքրիստոնեական միջոցառումներին, պարսկա-բյուզանդական պատերազմներին և այլն: Ինչպես եկեղեցական ժամանակագրության մեջ, այնպես նաև այստեղ հանգամանորեն ներկայացված են Հուստինիանոս կայսեր (527—565 թթ.) և Թեոդորա թագուհու գործունեության հետ կապված իրադարձությունները: Ժամանակագրության մեջ լայն արձագանք են գտել նաև Մավրիկիոս (582—602 թթ.) ու Հերակլիոս (610—641 թթ.) կայսրերի և պարսից արքա Խոսրով Փարվեզի (590—628 թթ.) հարաբերությունները:

¹⁴ Chabot — I, p. 26—104.

¹⁵ Նույն տեղում, 105—114:

¹⁶ Նույն տեղում, 115—238:

Չորրորդ մասում¹⁷ «Ժամանակագրության» ընթացքը փոփոխություն չի կրում. իրադարձությունները նորից շարադրվում են բյուզանդական կայսրերի հաջորդականության համեմատ, այժմ արդեն ներհյուսված արաբական խալիֆների գահակալմանը վերաբերող տվյալներով: Հեղինակը հատկապես կանգ է առնում արաբական տիրապետության սկզբնավորման վրա, մանրամասն նկարագրում պարսից տերության աստիճանական անկումը և Հերակլիոս կայսեր մղած հուսահատ պատերազմներն արաբների դեմ, որոնց ընթացքում աշֆի են ընկնում մի քանի հայազգի գորավարներ: Զգալի տեղ է հատկացված նաև խալիֆաթի ներքին կյանքին, ժողովրդական ապստամբություններին և աղանդավորական շարժումներին:

«Ժամանակագրության» հինգերորդ, ամենածավալուն մասը¹⁸ նվիրված է սելջուկյան նվաճումների և Մերձավոր արևելքում թուրքական ամիրայությունների հիմնադրման պատմությանը: Հավասարապես վեր է հանված նաև խաչակրաց արշավանքների և Ասորիքի խաչակրաց պետությունների կազմավորման պատմությունը: Դա մի ժամանակաշրջան էր, երբ Մերձավոր արևելքի ազգային, քաղաքական և հասարակական իրադրությունը նորից, արդեն քանիցս անգամ, ենթարկվեց արմատական փոփոխությունների:

XI դարի կեսերին արևելքից դուրս հորդեցին սելջուկ-թուրքերի կիսավայրենի ֆոշվորական ցեղերը և կարև ժամանակի ընթացքում ծնկի բերին Արաբական խալիֆաթն ու Բյուզանդական կայսրությունը: 1055 թ. սելջուկյան զորագլուխ Տողրուկ-բեգը, խալիֆից ստանալով սուլթանի կոչում, վավերացրեց իր փաստական իշխանությունը և հիմնադիր հանդիսացավ թուրքական աշխարհակալ պետության: Խալիֆաթի հետ իրենց հաշիվները մաքրելուց հետո, 1071 թ., թուրքերը Մանազկերտի նակատամարտում ջախջախիչ պարտության մատնեցին Բյուզանդական կայսրությանը, և վերջինս փաստորեն դուրս մղվեց Մերձավոր արևելքի պատմության բառերաբեմից:

Սելջուկյան կայսրությունն իր հզորության գագաթնակետին հասավ Ալփ-Արսլան (1063—1072 թթ.) և Մելիքշահ (1072—1092 թթ.) սուլթանների օրոք՝ տարածվելով Չինաստանի սահմաններից մինչև Միջերկրական ծով և Անդրկովկասից մինչև Հնդկական օվկիանոս: Մելիքշահի և հատկապես նրա վեզիր Նիզամ ալ-Մուլքի եռանդուն միջոցառումների շնորհիվ սելջուկյան պետությունը, աստիճանաբար վերականգնելով մերձավորարևելյան քաղաքակրթության նախկին ավանդ-

¹⁷ Chabot—I, p. 239—Chabot—II, p. 45.

¹⁸ Chabot—II, p. 45—241.

ները, սկսեց ամրապնդվել ու կայունանալ նաև ներքնապես՝ հասարակական-ֆաղափական հարաբերությունների բնագավառում:

XI դարի վերջում Մերձավոր արևելքում հայտնվեց նաև մի նոր ֆաղափական ուժ: Ընչազուրկ գյուղացիության զայրույթը և ասպետների ռազմատենչ եռանդը զսպելու նպատակով, Հոմի պապն ու եվրոպական խոշոր ֆեոդալները առաջ ֆաշեցին խաչակրության գաղափարը: Առաջին խաչակրաց արշավանքը կազմակերպվեց 1096—1099 թթ., որի անմիջական արդյունքը եղավ Երուսաղեմի խաչակրաց թագավորության (1099 թ.) և նրա ենթակա իշխանությունների՝ Եդեսիայի (1098 թ.), Անտիոքի (1098 թ.) ու Տրիպոլիի (1102 թ.) կոմսությունների հիմնադրումը:

Գրավելով Միջերկրական ծովի և Որոնտես գետի միջև ընկած նեղ շերտը, ֆրանկները թուրքերին զրկեցին ծովային հաղորդակցությունից և մեկուսացրին Եգիպտոսի Ֆաթիմյաններին: Դեպի արևելք ծավալվելու և Եգիպտոսի ներքին գործերին միջամտելու բոլոր հետագա փորձերը, սակայն, ապարդյուն անցան: Ասորիքի նշանավոր ֆաղափները՝ Հալեպը, Համան, Հոմսը և Դամասկոսը, չնայած բազմիցս ենթարկվեցին խաչակիրների ննջմանը, բայց միշտ մնացին մահմեդականների ձեռքում: Այսպիսով, Եդեսիայից արևելք ֆրանկները ոչ մի հաջողություն չունեցան: Այնուամենայնիվ խաչակրաց արշավանքները, վրաց Բագրատունիների պատերազմական գործողությունների կողքին, որպես արտաքին հանգամանք, որոշակի դեր խաղացին Սելջուկյան կայսրության թուլացման գործում, թեև որոշիչը ներքին պատճառներն էին:

Մելիֆշանից հետո սելջուկյան աշխարհակալ պետությունը ներքին երկայնակությունների պատճառով սկսեց փայփայվել: Նրա սահմաններում առաջացան բազմաթիվ կիսանկախ ամիրայություններ, թեև անվանապես պահպանվում էր սելջուկյան սուլթանների իշխանությունը: Անատոլիայում ստեղծվեց Ռումի սուլթանությունը, որը գոյատևեց 1077—1307 թթ.: Սեբաստիայում և Մալաթիայում իշխում էին Դանիշմենդյան ամիրաները (1071—1178 թթ.): Հյուսիսային Միջագետքի ֆաղափներին՝ Հիսն-Քեֆային, Ամիդիին, Մարդինին ու Նփրկերտին տիրում էին Արտուֆյանները (1102—1408 թթ.): Մեծ Հայքի կենտրոնական նահանգները, Խլաթ մայրաֆաղափով, գտնվում էին Շահարմենների ձեռքում (1110—1207 թթ.): XII դարի 20—30-ական թթ. Հյուսիսային Միջագետքում և Ասորիքում ստեղծվեց Զանգիդյան (1127—1222 թ.), իսկ հյուսիսարևմտյան Իրանում՝ Ելդեգիդյան արաբեգությունը (1137—1225 թթ.): Սելջուկյան աշխարհակալության արևելյան նահանգները՝ Իրանը և Միջին Ասիան, նույնպես մասնատված էին զանազան ամիրայությունների ու արաբեգությունների:

Թուրքական այս պետությունները մշտական պայքարի ու պատերազմի մեջ էին իրար հետ: Յուրաքանչյուր ամիրա ձգտում էր հաստատել իր գերիշխանությունը, սակայն նրանցից ոչ մեկին չհաջողվեց վերականգնել Սելջուկյան կայսրության նախկին միասնությունը: Այդ ուղղությամբ որոշ հաջողությունների հասան Ելդեգիզը (1137—1176 թթ.), Զանգին (1127—1146 թթ.) և հետագայում՝ Սալահեդդինը (1169—1193 թթ.): Ելդեգիզի դերը պատմության մեջ որոշվում է այն բանով, որ նա, միավորելով հյուսիսարևմտյան Իրանի, Ասրպատականի և Ադվանի մահմեդականներին, կարողացավ կասեցնել վրաց Բագրատունիների հարանուն առաջխաղացումը¹⁹:

Ինչ վերաբերում է Իմադեդդին Զանգին, ապա նա, 1127 թ. նշանակվելով Մոսուլի կառավարիչ և հաջորդ տարի գրավելով Հալեպը, փաստորեն հիմք դրեց Ասորիքի միասնական մահմեդական պետությանը, որը մահացու սպառնալիք դարձավ խաչակրաց իշխանությունների գոյության համար: 1144 թ. Զանգին կործանիչ հարված հասցրեց ֆրանկներին՝ նրանցից խլելով Եդեսիա ֆաղաֆը և, այդպիսով, վերացնելով Եդեսիայի կոմսությունը: Երկու տարի անց, երբ Զանգին սպանվեց դավադիրների ձեռքով, ֆրանկները փորձեցին ետ խլել ֆաղաֆը, սակայն դա նրանց չհաջողվեց: Ապարդյուն անցավ նաև Եդեսիայի վրեժը լուծելու նպատակով 1147—1149 թթ. կազմակերպված երկրորդ խաչակրաց արշավանքը:

Զանգիի որդու՝ Նուբեդդինի օրոք թուրքերի և ֆրանկների միջև միառժամանակ հարաբերական խաղաղություն հաստատվեց: Սակայն այդ վիճակը շուտով փոխվեց Եգիպտոսի Այյուբյան սուլթանության հիմնադիր Սալահեդդինի ջանքերով: Վերացնելով Եգիպտոսի Ֆաթիմյան խալիֆների իշխանությունը, Սալահեդդինը կարճ ժամանակի ընթացքում նվանեց Ասորիքի բոլոր ֆաղաֆները, իսկ 1187 թ. գրավեց նաև Երուսաղեմը:

Դրանից հետո այլևս ֆրանկներն Արևելքում որևէ նշանակալից դեր չխաղացին: Երրորդ խաչակրաց արշավանքը (1189—1192 թթ.) մարեց՝ հասնելով Ասորիքի սահմաններին: Զորերորդը (1202—1204 թթ.) կանգ առավ Կոստանդնուպոլսում և ավարտվեց Բյուզանդական կայսրության պարտությամբ: 1217—1221 թթ. տեղի ունեցավ հինգերորդ, իսկ 1228—1229 թթ.՝ վեցերորդ խաչակրաց արշավանքը: Ճիշտ է, 1229 թ. ֆրանկներին հաջողվեց նորից տիրել Երուսաղեմին, սակայն 1244 թ. նրանք վերջնականապես կորցրին այն:

Սալահեդդինի հաջորդները, հատկապես Մելիք-ալ-Ադիլը (1200—

¹⁹ Հմմտ. *К. Э. Босворт*, *Мусульманские династии*, М., 1971, стр. 172.

1218 թթ.) և Մելիֆ ալ-Քամիլը (1218—1238 թթ.) ոչ միայն կարողացան պահպանել Ասորիքի միասնությունը, այլև Այուբյան հարստության գերիշխանությունը տարածեցին Նիբեհեմի, Ամիդի, Հիսն-Քեֆայի, Սինջարի ու Խլաթի վրա: 1230-ական թթ., սակայն, պատմության քառերաբեմ էլան նոր ուժեր՝ քաթար-մոնղոլական ժողովուրդները, որոնք մի անգամ ևս հիմնովին փոխեցին Մերձավոր արևելքի իրավիճակը:

Շուրջ երկուամարյուրամյա պատմության այսպիսի կարևոր մի ժամանակաշրջան է ընդգրկում, ահա, Անանուն Եդեսացու «Ժամանակագրության» վերջին մասը, որի հայերեն թարգմանությունը սույն հրատարակությամբ ներկայացվում է հայ ընթերցողին: Այստեղ համարյա առանց բացառության արտացոլված են վերը թվարկված բոլոր նշանակալից իրադարձությունները: Այդ հիմնական իրադարձությունների պատմագիտական իմաստավորման խնդրում հնարավոր է, որ «Ժամանակագրությունը» որևէ նորություն չբերի, սակայն անգնահատելի է նրա նշանակությունը բազմաթիվ մանրամասների, դեպքերի, ժամանակագրական տվյալների ու պատմական անձանց նշգրտման գործում:

* * *

Ասորական հետագա աղբյուրները որևէ տեղեկություն չեն հաղորդում ո՛չ Անանուն հեղինակի, ո՛չ էլ նրա երկասիրությունների մասին: Միայն խնդրո առարկա «Ժամանակագրությունն» է, որ պարունակում է հեղինակի կենսագրությանը վերաբերող մի քանի կցկառու տվյալներ: 1187 թ. Անանունը ներկա է լինում Սալահեդդինի կողմից Երուսաղեմի առման ողբերգական դեպքին²⁰: 1189 թ. հակոբիկյան Եկեղեցու արևելյան թեմերի առաջնորդի՝ մաֆրիանի հետ նա այցելում է Թագրիտ²¹: Այսպիսով պարզվում է, որ մոտավորապես վերջին հիսուն տարիների դեպքերը շարադրելիս Անանունը հանդես է գալիս որպես ականատես և ականջալուր ժամանակագիր:

Որոշ տեղեկություններ հնարավորություն են տալիս նշտելու «Ժամանակագրության» ստեղծման մոտավոր ժամանակը: Քաղաքական ժամանակագրության 500-րդ գլխում հեղինակը նշում է. «Մենք նկարագրեցինք մինչ այժմ, այսինքն՝ մինչև 1514 (1203) թվականը կատարված դեպքերը»²²: Նույն հիշատակագրությունը կրկնված է նաև Եկեղեցական ժամանակագրության մեջ²³, միայն ոչ թե 1203, այլ 1204 թվականի համար: Այս տեղեկությունները ցույց են տալիս, որ «Անանուն

²⁰ Տե՛ս սույն թարգմանությունը, գլ. 484:

²¹ Տե՛ս Chabot—II, p. 318. Նաև՝ Abouna-Fiey, p. 238.

²² Տե՛ս սույն թարգմանությունը, գլ. 500:

²³ Տե՛ս Chabot—II, p. 340. Նաև՝ Abouna-Fiey, p. 253.

ժամանակագրության» մեծ մասը ավարտվել է 1203—1204 թթ.: Ինչ-
ինչ հանգամանքների բերումով գործը հավանաբար ընդհատվել է և
շարունակվել երկարատև ընդմիջումից հետո:

«ժամանակագրության» ստեղծման ժամանակի ստորին սահմանը
պարզվում է հեղինակի մի կարևոր ակնարկի շնորհիվ: Հիշատակելով
Դամասկոսի Այուբյան ամիրա Մելիֆ ալ-Աշրաֆին, Անանունն ավելաց-
նում է. «...որն արժանի է բարի հիշատակի»²⁴: Նշված խոսքերը տեղին
են միայն մեռած մարդու հասցեին, և քանի որ Մելիֆ ալ-Աշրաֆը մե-
ռել է 1237 թ., ուստի «ժամանակագրությունն» ավարտվել է դրանից
հետո, շուրջ 1240 թ.²⁵:

Անանունի կենսագրությանը վերաբերող մյուս կարևոր հարցը, որ
արժանացել է հետազոտողների ուշադրությանը, նրա հայրենի բնակա-
վայրի պարզաբանումն է: Սոսկական հետաքրքրությունից բացի այս
հարցն ունի նաև կարևոր աղբյուրագիտական նշանակություն, քանի որ
շատ հանախ իրադարձությունների աշխարհագրական ընդգրկումը կախ-
ված է այն բանից, թե որտեղ է գործել պատմական երկասիրության հե-
ղինակը:

Թուուցիկ հայացքով անգամ նկատելի է, որ մեր «ժամանակագրու-
թյան» համարյա բոլոր դրվագներում ուշադրության կենտրոնում են
գտնվում Եդեսիայի հետ կապված իրադարձությունները: Դրանից հե-
տազոտողների մեծ մասը բնականաբար հանգել է այն եզրակացու-
թյան, որ Անանուն ժամանակագիրը Եդեսացի է: Ժ.—Բ. Շաբուն փոր-
ձում է հերքել այս տեսակետը, ուշադրություն հրավիրելով այն փաստի
վրա, որ Անանունը, Եդեսացի շիինելով հանդերձ, կարող էր հարուստ
տեղեկություններ հաղորդել Եդեսիայի մասին, քանի որ, ինչպես հայտ-
նի է, նա օգտվել է Բարսեղ բար-Շումմանայի «Եդեսիայի պատմությու-
նից»²⁶: Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Ժ.—Մ. Ֆիեն, Բարսեղի
մահվան թվականին (1169 թ.) հաջորդող շարադրանքում ևս Եդեսիան
նույնքան բացառիկ տեղ է զբաղեցնում²⁷:

Իր հիմնական մասով Անանուն Եդեսացու «ժամանակագրությունը»
բառացի ֆաղագրություն է անցյալի ասորական աղբյուրներից, հատ-
կապես Հակոբ Եդեսացու (մահ. 708 թ.) «Նկեղեցական պատմությու-
նից», Դիոնիսիոս Թելլ-Մահրացու (մահ. 845 թ.) «ժամանակագրությու-
նից» և Բարսեղ բար-Շումմանայի վերոհիշյալ «Եդեսիայի պատմությու-

²⁴ *Տե՛ս սույն թարգմանությունը, գլ. 518:*

²⁵ *Հմմտ. S. Runciman, A history of the Crusades, v. II, Cambridge, 1952,*
p. 484; *Abouna-Fley*, p. VII.

²⁶ *Տե՛ս Chabot—II, p. I.*

²⁷ *Տե՛ս Abouna-Fley, p. VIII.*

նից»: Քաղաքական բնույթը, սակայն, ոչ միայն չի նսեմացնում, այլև, ընդհակառակն, բարձրացնում է Անանունի երկի արժեքը, որովհետև նշված աղբյուրներից վերջին երկուսը մեզ չեն հասել, իսկ առաջինից միայն առանձին հատվածներ են պահպանվել:

Հետազոտողների մեծ մասի կարծիքով, Անանունը ինչ-ինչ հանգամանքների բերմամբ չի օգտվել ժամանակի մեծագույն պատրական պատմագրի՝ Միֆայել Մեծի (մահ. 1199 թ.) սովորածավալ «ժամանակագրությունից»: Հակառակ տեսակետի վրա է կանգնած Ն. Ելիսեևը, ըստ որի XII դ. դեպքերի նկարագրության համար Անանունը եղեսացին օգտագործել է Միֆայել Ասորու երկասիրությունը²⁸: Սակայն Ն. Ռանմանին, Ֆ. Նոն և Ժ.—Մ. Ֆիեն Միֆայելի և Անանունի «ժամանակագրությունների» նմանությունները բացատրում են ընդհանուր աղբյուրների առկայությամբ²⁹:

Ժ.—Մ. Ֆիեի կարծիքով, Անանունն օգտագործել է նաև մեկ-երկու արաբական աղբյուրներ, որովհետև դեպքերը երբեմն թվագրում է Հիջրայի թվականով: Ժ.—Մ. Ֆիեն գնում է նաև հայերեն որևէ սկզբնաղբյուրի օգտագործման հնարավորության հարցը. «Կարելի՞ է արդյոք ենթադրել նաև մի հայերեն աղբյուր, — գրում է նա: — Դա շատ բնական կլիներ, քանի որ Եղեսիայի շրջանում հայերը խառնված էին ասորիների հետ: Երկու ժամանակագրություններն էլ (եկեղեցական և ֆաղաֆական՝ Լ. Տ.—Պ.) բազմաթիվ տեղեկություններ են պարունակում հայ կաթողիկոսների, ինչպես նաև հայ իշխանների կոնիվների մասին: Մի տեղ անգամ Յաղուբ Արսլանի անունը գրված է Ագոբ Արսլան ձևով³⁰, որը մոտ է հայկականին: Կարելի էր ուրեմն մտածել, որ Մատթեոս Ուոհայեցու 962—1136 թթ. վերաբերող ժամանակագրությունն ու Գրիգոր Երեցի մինչև 1162 թ. ընդգրկող շարունակությունն է այդ աղբյուրը: Սակայն երկու բնագրերի զուգահեռ ընթերցումը ցույց է տալիս, որ մանրամասների մեջ նրանք այնքան շատ են տարբերվում, որ անհնար է մտածել Մատթեոս Ուոհայեցուց Անանունի կատարած ուղղակի փոխառությունների մասին»³¹: Ինչպես տեսնում ենք, մերժելով անգամ Մատթեոս Ուոհայեցու և Անանունի կապը, Ժ.—Մ. Ֆիեն չի բացառում հայերեն աղբյուրի օգտագործման հնարավորությունը:

Մեր կարծիքով, Անանունը եղեսացու «ժամանակագրությունը», Ժ.—

²⁸ Nikita Elisséeff, *Nūr Ad-Dīn. Un grand prince musulman de Syrie au temps des Croisades (1118—1174)*, t. 1, Damas, 1967, p. 32.

²⁹ Տե՛ս *Abouna-Fley*, p. IX—X.

³⁰ Տե՛ս *Chabot*—II, p. 159; *Abouna-Fley*, p. 120, սուլյն թարգմանության ղԼ. 442.

³¹ *Abouna-Fley*, p. XI.

Մ. Ֆիեի նշածից բացի, պարունակում է մի ավելի ցայտուն փաստ, որը վկայում է հայերեն սկզբնաղբյուրի օգտագործման մասին: Քաղաքական ժամանակագրության 283-րդ գլխում Անանունը գրում է. «Շուտով, սակայն, նրա (Ղազիի՝ Լ. Տ.-Պ.) ու իբերների, այսինքն՝ վրացիների, թագավորի միջև, որը Դավիթ էր կոչվում, տարածայնություն ծագեց»³²: Ընդգծված բառի փոխարեն ասորական բնագրում դրված է *brsty'* բառը, որը ֆրանսերեն բնագրի թարգմանիչը տառադարձել է *Brestāyē* անիմաստ ձևով³³: *Brsty'* բառը բացատրելի է միայն հայերենի միջոցով. դա հայերեն վրացի բառի ասորական վերաբանությունն է *āyē* հոգնակի ցուցիչով, և պետք է տառադարձվի *Vraçāyē* (=վրացիներ): Ինչպես հայտնի է, հայերեն վ-ն միջնադարյան ասորական աղբյուրներում որպես կանոն վերաբանարվել է *h*-ով³⁴, իսկ *st* (<*ts**) = *g* (ջ):

* * *

Մասնագետների կողմից արժարժվել է նաև Անանուն Եդեսացու քաղաքական դիրքորոշման հարցը, որը տեղիք է տվել գանազան իրարամերժ կարծիքների: Այսպես, Երինակ, ըստ Ն. Ելիսեևի՝ հեղինակը «շատ աշխույժ շարադրաբանակով մեզ մանրամասներ է հաղորդում ֆրանկների ու թուրքերի մասին՝ ոչ այնքան բարյացակամությամբ ցուցաբերելով բյուզանդացիների նկատմամբ»³⁵: Դժվար է շիամածայնել այս տեսակետի հետ, որովհետև Անանունն իսկապես առիթը բաց չի թողնում բյուզանդացիներին դատապարտելու համար: Բնորոշ է հատկապես այն փաստը, որ նա առանձին դիտավորությամբ է ընդգծում խաչակիրների հանդեպ հույների նյութած դավերը, որոնք իրագործվում էին թուրքերի համագործակցությամբ³⁶: Ասորիների հակաբյուզանդական զգացումները լիովին հասկանալի են, որովհետև իր ողջ գոյության ընթացքում հակոբիկյան եկեղեցին ենթարկվել է ֆաղկեդոնականության մշտական ոտնձգություններին ու հալածանքներին³⁷:

Ավելի դժվար է բացատրել Անանուն Եդեսացու վերաբերմունքը հայերի և ֆրանկների նկատմամբ: Այդ առթիվ Ռ. Գրուսեն գրում է. «Այս աղբյուրը, ավելի քան Միֆայել Ասորին, դրսևորում է հակոբիկյան միջավայրի բնական հայատյացությունն ու ֆրանկատյացությունը՝ դրա կողմին ազգակցական ու մշակութային բացահայտ համակրանք ցուցաբերելով թուրք-արաբական տիրապետության նկատմամբ: Միֆայել

³² Հմմտ. սույն թարգմանության գլ. 283:

³³ *Abouna-Fiey*, p. 62.

³⁴ Հմմտ. Լ. Տեր-Պետրոսյան, Միջին հայերենի հնչյունաբանությունը ըստ ասորական աղբյուրների, «Պատմա-բանասիրական հանդես», 1974, №3, էջ 139—154:

³⁵ *N. Elisséeff*, *Nur Ad-Din...*, t. 1, p. 32.

³⁶ Հմմտ. սույն թարգմանության գլ. 243, 407, 433 և այլն:

³⁷ Հմմտ. *P. Kawerau*, *Die Jakobitische Kirche im Zeitalter der syrische Renaissance*, Berlin, 1960, S. 82.

պատրիարքը, որը նույնպէս չափազանց հայատյաց է և հազիվ թէ ավելի քան է հակակրօմ ֆրանկներին... , քաղաքական նկատառումներով, ինչպէս նաև նշմարիտ քրիստոնեական զգացումներով, ձգտում է համերաշխություն պահպանել ֆրանկ իշխանների հետ: Անանուն ասորին, ընդհակառակն, շունենալով հռչակավոր առաջնորդի խոհեմությունն ու հարուստ անհատականությունը, ամենևին զլանում է փողարկել իր իսլամասեր զգացումները: Դա մի *քրիստոնեյա արար է՝ եվրոպացիների ներկայության դեմ մահմեդական արարների ու թուրքերի հետ ունեցած համերաշխության բնագրով*³⁸:

Ռ. Գրուսէի տեսակետին փորձում է առարկել Ժ.—Մ. Ֆիեն, ուշադրություն հրավիրելով այն փաստի վրա, որ «ժամանակագրության» մեջ երկու անգամ ֆրանկները կոչված են «օրհնյալ»³⁹: Այսպէս. «Սակայն օրհնյալ ֆրանկները, որոնք բարի շէին տրամադրված հունաց կայսեր նկատմամբ և նրա հետ համագործակցում էին կեղծ սիրալիրությամբ, խորհուրդ չտվին տվյալ պահին պաշարել Հալեպը»⁴⁰, կամ՝ «...օրհնյալ ֆրանկները անսպասելիորեն հայտնվեցին և մինչև երեկո թափնվեցին մի հովտում»⁴¹: Մեզ թվում է, սակայն, որ այս հատվածներում «օրհնյալ» (*brīkā*) բառը ոչ այնքան դրվատական, որքան հեզնական բնույթ ունի, քանի որ նույն որակումը մի անգամ էլ հատկացված է հույներին, բայց այնպիսի նախադասության մեջ, որտեղ դժվար է բարյացակամություն ենթադրել: Նկարագրելով երկրորդ խաչակրության ձախողումը, Անանունը գրում է. «Այսպիսի դառը վախճան ունեցավ այդ թագավորների արշավանքը օրհնյալ հույների նենգության պատճառով»⁴²:

Այնուամենայնիվ, շնայած Ժ.—Մ. Ֆիէի ոչ այնքան հիմնավորված առարկությանը, չի կարելի ընդունելի համարել նաև Ռ. Գրուսէի ծայրահեղորեն չափազանցված տեսակետը: Ճիշտ է, Անանունը որպէս կանոն դատապարտում է ֆրանկների վատ արարները, երբեմն ծաղրի է ենթարկում նրանց արկածախնդրական ձեռնարկումները և այլն, սակայն նույն կերպ է վարվում նաև թուրքերի, եգիպտացիների ու մյուսների նկատմամբ: Խիստ բացասական վերաբերմունք ցուցաբերելով Եդեսիայի կոմս կրտսեր Ժոսլինի հանդեպ, միաժամանակ նա մեծ դրվատանքով է արտահայտվում ավագ Ժոսլինի և Մարաշի կոմս Բաղդուիհի մասին: Այնպէս որ ճիշտ չի լինի Անանունի մոտ անհաշտ հակակրօմ նկատել ֆրանկների նկատմամբ:

Ինչ վերաբերում է թուրք սուլթանների ու ամիրաների հասցեին

³⁸ R. Grousset, Histoire..., t. II, p. 866—867.

³⁹ Abouna-Fiey, p. XI—XII.

⁴⁰ Տե՛ս սույն թարգմանության զլ. 403:

⁴¹ Նույն տեղում, զլ. 427:

⁴² Նույն տեղում, զլ. 407:

շոայլած գովեստներին, ապա դա էլ ունի իր պարզ բացատրությունը: Օտարների բռնի տիրապետության պայմաններում հեղինակը ֆաղափական նկատառումներով շէր կարող բացահայտել իր իսկական զգացումները իշխանությունների հանդեպ: Նույն երևույթը բնորոշ է նաև միջնադարյան հայկական մատենագրությանը, որը բազմաթիվ շրվատական վկայություններ է պարունակում Մելիֆշահի, Շահ-Աբասի և այլոց մասին: Հիմնվել նման փաստերի վրա և ենթադրել, թե միջնադարյան երիտասնյա հեղինակները նախընտրել են մահմեդականների տիրապետությունը, նիշտ չի լինի:

Ի միջի այլոց, Անանուն Եղեսացին որքան էլ ձգտում է ֆոդարկել իր զգացումները մահմեդականների հանդեպ, այնուամենայնիվ, տեղատեղ բացահայտում է իր իսկական վերաբերմունքը: Այսպես, օրինակ, նկարագրելով Անիի գրավումը վրացիների կողմից, նա նշում է, որ Գեորգի Գ թագավորը ֆաղափ «բնակիչներին փրկեց մահմեդականների դաժան լծից»⁴³:

* * *

Անդրադառնալով հայերի նկատմամբ Անանունի վերաբերմունքի հարցին, պետք է նշել, որ Ռ. Գրուսեն այստեղ էլ ընկել է ծայրահեղության մեջ: Անժխատելի է, իհարկե, որ հեղինակը բացասաբար է տրամադրված հայ եկեղեցու առանձին ներկայացուցիչների, մասնավորապես Գրիգոր Տղա կաթողիկոսի (1173—1193 թթ.) նկատմամբ: Բայց դա բացատրվում է մի որոշակի իրողությամբ. Գրիգոր Տղան, միջամտելով հակոբիկյան եկեղեցու ներքին գործերին, բռնել էր հակաթոռ պատրիարք Թեոդորոս բար-Վահբունի կողմը⁴⁴: Իսկ ընդհանուր առմամբ «ժամանակագրության» մեջ արտացոլված են հայերի և՛ լավ, և՛ վատ արարքները, որ հիմք է տալիս շկասկածել հեղինակի անաչառությանը:

Այսպես, Անանունը հանգամանալից կերպով շարադրում է, թե ինչպես 1112 թ. Եղեսացի մի խումբ հայեր ֆաղափր թուրքերին հանձնելու նպատակով դավանանական գործարք են կնքում Մոսուլի Մավդուդ ամիրայի հետ⁴⁵: Նույն դեպքը նկարագրված է նաև Միֆայել Ասորու⁴⁶ և Մատթեոս Ուտհայեցու⁴⁷ մոտ, միայն այն տարբերությամբ, որ վերջինս լռության է մատնում դավանանների ազգային պատկանելությունը: Դա-

⁴³ Նույն տեղում, գլ. 456:

⁴⁴ Նույն տեղում, «Հավելված Ա»:

⁴⁵ Նույն տեղում, գլ. 270:

⁴⁶ Chronique de Michel le Syrien, éditée par J.—B. Chabot, texte, t. IV, Paris, 1910, p. 594; trad. fr., t. III, 1905, p. 196.

⁴⁷ Մատթեոս Ուտհայեցի, ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 322:

տելով այս փաստից, կարելի էր մտածել, ուրեմն, որ Անանուն Եղեսացին ուզում է վարկաբեկել հայերին: Սակայն «Ժամանակագրության» 290-րդ գլխում նա ոգևորված նկարագրում է հայերի գործած մի հերոսական սխրանք. երկու տասնյակ հայ զինվորներ, խիզախորեն թափանցելով Արտուֆյան ամիրաների մայրաֆաղաֆ Հիսն-Զիադի (Խարբերդ) միջնաբերդը, փորձում են ազատել գերված ֆրանկ իշխաններին: Ի դեպ, Մատթեոս Ուոհայեցին, մեծապես գովելով զինվորների ֆաջությունը, որոնք «խորհեցան խորհուրդս ֆաջաց և կատարեցին զգործ անմահից», այս անգամ էլ չի նշում, որ նրանք հայ էին⁴⁸:

Հայերին պատիվ շքերող մի դրվագ էլ նկարագրված է «Ժամանակագրության» 440-րդ գլխում, որը նվիրված է մի անպիտան ֆահանայի զազրելի արարքին: Սակայն ընդամենը մի ֆանի էջ հետո⁴⁹ հեղինակը սրտառուչ կերպով պատմում է մի առափնի հայ կնոջ մասին, որը անպատվությունից խուսափելու համար երեխաների հետ նետվում է ջուրը: Դա մի գողտրիկ վկայաբանություն է, որը կարող է արժանի տեղ զբաղեցնել «Հայոց նոր վկաներին» նվիրված գրական հուշարձանների շարքում:

Ինչպես տեսնում ենք, Անանուն Եղեսացին անաշտ վերաբերմունք է ցուցաբերում հայերի նկատմամբ, և առանձին բացասական արտահայտությունները չեն կարող խախտել այս տպավորությունը: Որպես ազնիվ ժամանակագիր, նա չէր կարող կոծկել ուրիշների թերությունները, երբ չի խնայում անգամ իր հայրենակիցներին: Բազմաթիվ դառը խոսքեր, հայհոյանքներ և նզովքներ են ուղղված, օրինակ, ասորի հոգեվորականներ Աբդուն ավագերեցի, Բարսումա Խամայելի անունով ֆահանայի և Թեոդորոս բար-Վահրուն եպիսկոպոսի հասցեին⁵⁰:

Հայերի մասին տեղեկությունները, որոնք ցրված են «Անանուն ժամանակագրության» տարբեր գլուխներում, ընդգրկում են հնագույն դարերից մինչև հեղինակի ապրած ժամանակները: Տեղեկությունների մի մասը հայտնի է նաև այլ աղբյուրներից, և այստեղ «Անանուն ժամանակագրության» դերը սահմանափակվում է միայն նրանով, որ հաստատում, նշգրտում ու մանրամասնում է այդ աղբյուրների տվյալները: Սակայն կան նաև մի շարք տեղեկություններ, որոնք հայտնի են դառնում բացառապես շնորհիվ Անանուն Եղեսացու աշխատության, որ մեծապես բարձրացնում է նրա գիտական նշանակությունը:

Ուշագրավ է, օրինակ, հեղինակի վկայությունը Եղեսիայի թագա-

⁴⁸ Նույն տեղում, էջ 353—355:

⁴⁹ Սույն թարգմանության գլ. 442:

⁵⁰ Հմմտ. նույն տեղում, գլ. 414, 421, «Հավելված Ա»:

վորների հայկական ծագման մասին⁵¹: Դա ցույց է տալիս, որ Աբգար քաղաքների հայ լինելու առասպելը միջնադարում այնքան էր տարածվել, որ ասորիներն անգամ հավատ էին ընծայում դրան: Ի դեպ, այդ առասպելը բոլորովին գուրկ չէ պատմական հիմքից. հայտնի է, որ հայ Պարթևների մի նյուդը մ. թ. I դ. վերջում և II դ. սկզբում իսկապես կարև ժամանակով տիրել է Եդեսիայի (Օսրոյենեի) քաղաքությունը գահին⁵²:

Մեծ արժեք են ներկայացնում Անանունի տեղեկությունները VII դ. իրադարձությունների՝ արաբական նվաճումների, բյուզանդա-արաբական պատերազմների, հայ-բյուզանդական և հայ-արաբական հարաբերությունների մասին, որոնց մի մասը արդեն մտել է գիտական շրջանառության մեջ⁵³: Անանունը զգալի տեղ է հատկացնում բյուզանդա-արաբական պատերազմների ընթացքում աչքի ընկած հայ գորավարներ Մանվելի, Գրիգորի և Դավթի գործունեությանը, որ վկայությունն է հայերի զինական նշանակալից ուժի:

Հետաքրքրական են նաև արաբական շրջանի Հայաստանի հայտնի անցուդարձերին վերաբերող տվյալները, որոնք մեկ անգամ ևս հաստատում են պատմական մյուս սկզբնաղբյուրների արժանահավատությունը: Այս առումով արժանի են հիշատակման «Ժամանակագրության» տեղեկությունները Փիլիպպիկոս կայսեր (711—713 թթ.) հալածանքների պատճառով արաբների մոտ ապաստան գտած հայերի, Արաբական խալիֆայության դեմ հայ ժողովրդի 703 թ. ապստամբության և հայ նախարարների շարաշար ողջակիզման մասին⁵⁴:

Անանունը շատ ավելի մանրամասն տեղեկություններ է հաղորդում Հարավային Կապադոկիայի և Հյուսիսային Ասորիքի հայկական իշխանությունների մասին: Ինչպես հայտնի է, բյուզանդական կայսրերի նվաճողական ֆաղափականության հետևանքով, սկսած XI դ. 20-ական թթ., հայ ժողովրդի մի զգալի մասը գաղթել էր Եփրատից արևմուտք⁵⁵: Սելջուկյան արշավանքները հայերին ստիպում են ավելի ու ավելի հեռանալ հայրենի բնակավայրերից և թափանցել Հյուսիսային Ասորիքի և Կիլիկիայի անմատչելի գավառները: Նրանք աստիճանաբար այնքան

⁵¹ Նույն տեղում, «Հավելված Բ»:

⁵² Տե՛ս R. Duval, Histoire politique, religieuse et littéraire d'Edesse jusqu'à la première Croisade, Paris, 1892, p. 27, 52—55.

⁵³ Տե՛ս Н. В. Пугулевская, Византия и Иран..., стр. 283—284, 287—288. А. Тер-Гевондян, Армения и Арабский халифат, Ереван, 1977, стр. 11, 23, 25.

⁵⁴ Հմմտ. սույն թարգմանությունը, «Հավելված Բ»:

⁵⁵ XI դ. հայկական գաղթների մասին մանրամասն տե՛ս G. Dédéyan, L'immigration arménienne en Cappadoce au XI^e siècle, „Byzantion“, t. XIV Bruxelles, 1975, p. 41—117.

են սովորանում, որ Մանազկերտի նակատամարտում բյուզանդացիների կրած ջախջախիչ պարտությունից հետո (1071 թ.) դառնում են այդ երկրների տերերը, կարողանալով լեզու գտնել և համաձայնության գալ սելջուկների հետ:

Մոտ տասնհինգ տարի մեծ հաջողությունների է հասնում հատկապես Փիլարտոս Վարաժնունու հիմնադրած հայկական իշխանությունը, տարածվելով Եդեսիայից մինչև Կիլիկիայի խորքեր⁵⁶: 1086 թ., սակայն, Փիլարտոսի իշխանությունը նվաճվում է սելջուկյան սուլթան Մելիքշահի կողմից: Նրա փլատակների վրա առաջանում են մի շարք ավելի մանր հայկական իշխանություններ, որոնք կարողանում են իրենց գոյությունը պահպանել մինչև հաջորդ դարի առաջին տասնամյակները:

Նշված տարածությունների մեծ մասը խաչակրաց արշավանքների նախօրյակին դեռևս գտնվում էր հայ իշխանների տիրապետության տակ: Այսպես, լեռնային Կիլիկիայում տիրում էր Ռուբենի որդի Կոստանդինը, Քեսունում, Մարաշում, Ռապանում և Հոռմկլայում՝ Գող Վասիլը, Եդեսիայում՝ Թեոդորոս (Թորոս) կյուրապաղապը, Մելիտենենում՝ նրա աներ Գաբրիելը, Կարկառի գավառում՝ Կոստանդինը, իսկ Նգեպում⁵⁷ և Պիրում՝ Գրիգոր Մագիստրոսի թոռներ Լիկոսը և Ապլղարիպը:

Հայկական այս իշխանությունները, մեծ հույսեր կապելով խաչակիրների հետ, սկզբնական շրջանում զգալի աջակցություն ցույց տվեցին նրանց: Սակայն շուտով մեկը մյուսի ետևից նրանք զոհ գնացին վերջիններիս դավերին ու բռնություններին: Նախ և առաջ դավադրաբար վերացվեց Եդեսիայի հայկական իշխանությունը (1098), որին հետևեց մյուս իշխանությունների աստիճանական փայփայումն ու անկումը: Այս փաստը առանձին դառնությամբ են արձանագրում հատկապես միջնադարյան հայ հեղինակները՝ ամենայն խորությամբ գիտակցելով խաչակիրների կործանիչ դերը հայկական իշխանությունների վերացման գործում: Այսպես, բնութագրելով Եդեսիայի կոմս Բաղդուին II-ի (1100—1118 թթ.) գործունեությունը, Մատթեոս Ուոհայեցին գրում է. «...մի առ մի փակեաց զամենայն իշխանսն Հայոց կարգաւ՝ առաւել քան

⁵⁶ Փիլարտոսի և Հյուսիսային Ասորիքի մյուս հայկական իշխանությունների մասին մանրամասն տե՛ս J. Laurent, Études d'histoire arménienne, Louvain, 1971, p. 61—128 (Des Grecs aux Croisés. Étude sur l'histoire d'Édesse entre 1071—1098), p. 148—159 (Byzance et Antioche sous le curopalate Philarète). Դ. Դ. Мукаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, стр. 70—80.

⁵⁷ Բանասիրության մեջ այս բնակավայրը հաճախ շփոթվել է Միջագետքի Մրծբին քաղաքի հետ. Նգեպի տեղադրման մասին մանրամասն տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Հայերը միջնադարյան Մրծբինում և Մեծ Հայքի հարավային նահանգներում, «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 3, էջ 80—92:

գտունն Պարսից, և այսպիսի օրինակաւ հալածականս արար զիշխանս
Հայոց՝ զայն, որ մնացեալ էին ի կատաղի ազգէն Թուրքաց»⁵⁸: Ավելի
դիպուկ է Սմբատ Սպարապետի վկայութիւնը. «Եւ այնպէս նեղեցին
կամսերն Ֆոանգաց զիշխանսն Հայոց, մինչև հանին ի գաւառաց և յամ-
րոցաց իւրեանց, և ոչ ոք կարէ պատմել զդառնութիւն, զոր ածին Ֆոանգ-
նին ի վերայ Հայոց»⁵⁹:

Բարենպաստ հանգամանքներ ընդամենը այս համատարած կոր-
ծանումից զերծ մնաց միայն Ռուբինյան իշխանութիւնը, որը թեև բազ-
միցս ենթարկվեց ինչպէս խաչակիրների, այնպէս նաև բյուզանդացի-
ների ու սելջուկների հարձակումներին, բայց կարողացավ շուրջ երեք
հարյուր տարի պահպանել իր գոյութիւնը: Այդ բանին, ի միջի այլոց,
անուղղակիորեն նպաստեց վերոհիշյալ հայկական իշխանութիւնների
վերացումը, որովհետև նրանց մարդկային զանգվածների և զինական
ուժերի մի մասը տեղափոխվեց Կիլիկիա:

Նշված իրադարձութիւնները լայն արձագանք են գտել «Անանուն
Ժամանակագրութեան» բազմաթիվ գլուխներում⁶⁰, հանգամանք, որ ընդ-
գծում է վերջինիս անվիճելի արժեքը հայ ժողովրդի պատմութեան ու-
սումնասիրման համար:

Անանուն եղեսացին մի շարք արժեքավոր տեղեկութիւններ է հա-
ղորդում նաև Կիլիկիայի հայկական պետութեան մասին⁶¹: Դրանցից մեծ
հետաքրքրութիւն են ներկայացնում հատկապէս Լևոն I իշխանի ժա-
մանակաշրջանի (1129—1137 թթ.) իրադարձութիւններին վերաբերող
տվյալները: Դա մի ժամանակաշրջան էր, երբ Կիլիկիայում խոշոր բա-
խումներ էին տեղի ունենում Դանիշմենդյան ամիրաների, բյուզանդա-
ցիների և ֆրանկների միջև, իսկ Լևոնը հաջողությամբ խուսանավում էր
դրանց արանում: «Անանուն ժամանակագրութիւնը» կարող է զգալի
դեր խաղալ նշված իրադարձութիւնների որոշ մանրամասնութիւնների
պարզաբանման գործում:

Ուշագրավ է, օրինակ, որ ըստ Անանունի՝ Տարսուսն ու Մսիսը Լևոնը
գրավել է ոչ թե հույներից, ինչպէս ընդունված է պատմագիտութեան
մեջ⁶², այլ՝ ֆրանկներից⁶³: Իսկ «Ժամանակագրութեան» հաղորդած այն

⁵⁸ Մատթեոս Ռոմայեցի, էջ 338:

⁵⁹ Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք, աշխատասիրութեամբ Ս. Ազըլյանի, Վենե-
տիկ, 1956, էջ 145:*

⁶⁰ *Հմմտ. սույն թարգմանութեան գլ. 237—239, 241, 245, 246, 249, 252, 255,
260, 275, 277, 287:*

⁶¹ *Հմմտ. նույն տեղում, գլ. 299—300, 309, 400, 441, 443, 459, 510, «Հավել-
ված Ա»:*

⁶² Տե՛ս Գ. Микаелян, *История...*, стр. 100.

⁶³ Տե՛ս սույն թարգմանութիւնը, գլ. 309:

փաստը, որ Ղազի Դանիշմենդյանը Բոհեմունդին ջախջախելուց հետո մտադիր է եղել երկրորդ անգամ արշավել Կիլիկիա⁶⁴, հաստատում է Միֆայել Ասորու տեղեկությունը, որ Լևոնը չի կատարել Ղազիին տված հպատակության խոստումը⁶⁵: Ընդհանուր տպավորությունն այն է, որ Լևոն I-ը ոչ թե պաշտպանողական, այլ հարձակողական կոիվներ է մղել Դանիշմենդյանների, ֆրանկների և հույների դեմ⁶⁶:

«Անանուն ժամանակագրության» որոշ տվյալներ վերաբերում են Կիլիկիո իշխան Թորոս II-ի (1144—1168 թթ.) և ֆրանկների ժամանակավոր դաշնակցությանը, երբ Թորոսը մասնակցում է Ասորիֆի նուրեղդին ամիրայի դեմ կազմակերպված մի ֆանի արշավանքների⁶⁷: Հետագոտողները հետաքրքիր մանրամասնություններ կարող են գտնել նաև Մլեն իշխանի (1169—1175 թթ.) դեմ նյութված դավադրության և նրա դժնդակ սպանության մասին⁶⁸: Իսկ Լևոն II-ին (1185—1219 թթ.) նվիրված գլուխներում իրենց արտացոլումն են գտել Անտիոքի իշխանության և Ռումի սուլթանության դեմ Կիլիկյան պետության մղած երկարատև պայքարի առանձին դրվագները⁶⁹:

Ինչ վերաբերում է բուն Հայաստանի անցուդարձերին, ապա այստեղ հեղինակը հասկանալիորեն նույնպիսի իրազեկություն հանդես չի բերում, ինչպես Ասորիֆի և Կիլիկիայի դեպքերը նկարագրելիս: Այնուամենայնիվ, նա որոշ շափով արձագանքում է նաև Հայաստանում կատարված կարևոր իրադարձություններին: Դրանցից են, օրինակ, Անիի գրավումը վրաց Գեորգի Գ թագավորի կողմից⁷⁰, Դանիշմենդյանների և վրացիների միջև տեղի ունեցած պատերազմները⁷¹, Իվանե Զաֆարյանի՝ դեպի Խլաթ ձեռնարկած արշավանքի ձախողումը⁷², Շահարմենների ու Այուբյանների պայքարը⁷³ և այլն: Շատ արժեքավոր են հատկապես Անանուն եղեսացու տվյալները Սասունի հայկական իշխանության մասին⁷⁴, ֆանի որ, ինչպես հայտնի է, վերջինիս վերաբերյալ ֆիշ տեղեկություններ են պահպանվել հայկական սկզբնաղբյուրներում:

⁶⁴ Նույն տեղում, գլ. 302:

⁶⁵ *Տե՛ս Գ. Микаелян, История...*, стр. 100.

⁶⁶ *Տե՛ս սույն թարգմանությունը*, գլ. 299, 309:

⁶⁷ Նույն տեղում, գլ. 441, 443:

⁶⁸ Նույն տեղում, գլ. 459:

⁶⁹ Նույն տեղում, գլ. 500, 510:

⁷⁰ Նույն տեղում, գլ. 456:

⁷¹ Նույն տեղում, գլ. 283:

⁷² Նույն տեղում, գլ. 508, 509:

⁷³ Նույն տեղում, գլ. 506, 507, 512:

⁷⁴ Նույն տեղում, գլ. 455:

Մի քանի խոսք հեղինակի հայացքների, նախասիրությունների և ուրիշ մասին:

Ինչպես կարելի էր նկատել վերը շարադրվածից, Անանուն, Եղեսացին որևէ որոշակի կողմնորոշում չի ցուցաբերում: Դա բացատրվում է այն բանով, որ ասորիները վաղուց արդեն քաղաքական նպատակներ չէին հետապնդում՝ հանդես գալով միայն որպես առանձին կրոնական համայնք: Նրանց համար դրական էր այն տիրակալը, որը կարողանում էր ապահովել երկրի խաղաղ կյանքը և չէր դիպչում հակոբիկյան եկեղեցու շահերին, լինե՞ր դա հայ, ֆրանկ, թե՞ թուրք՝ միևնույն է: Մեր հեղինակը ևս Եղեսիայի և ընդհանրապես Ասորիքի պատմական իրադարձությունները գնահատում է հիմնականում այս շափանիշով:

Անանուն Եղեսացին, միջնադարյան մյուս հեղինակների նման, երկրային գործերում մեծ տեղ է հատկացնում նախախնամության խաղացած դերին: «Հաղթանակ ու կարողություն տվողը և թագավորների գործերը տնօրինողն աստված է», — գրում է նա⁷⁵: Բնական աղետները, օտար նվաճողների բարբարոսությունները նա ներկայացնում է որպես աստվածային պատուհաս, որպես արդար հատուցում ժողովրդի գործած անհամար մեղքերի: Այսպես, օրինակ, մանրամասնորեն նկարագրելով Եղեսիայի բնակչության վատ արարքները՝ հարուստների անգրությունը, հոգևորականների ազահությունը, կանանց անբարոյականությունը և այլն, Անանուն Եղեսացին ավելացնում է. «Այդ պատճառով աստված բարկացավ և իր գայրույթը թափեց նրանց գլխին: Նա լիեց նրանց և մատնեց բռնակալի ձեռքը»⁷⁶: Մի ուրիշ դրվագում դժնդակ Երաշտի համար նա գտնում է հետևյալ բացատրությունը. «Ողջ ժողովուրդը համոզվեց, որ մեր շար մեղքերի պատճառով դադարեցին անձրևները»⁷⁷:

Անանուն հեղինակի բնորոշ գծերից մեկն էլ սնահավատությունն է, որն իր արտահայտությունն է գտել «Ժամանակագրության» բազմաթիվ գլուխներում: Որպես ցայտուն օրինակ կարելի է նշել 442-րդ գլխում շարադրված պատմությունը Կարկառի երկրում ծագած սոսկալի համահարակի և նրա զարմանահրաշ ավարտի մասին: Բնութագրական է նաև այն, թե ինչպիսի լրջությամբ է հեղինակը ներկայացնում բորոտների աղբյուրի հրաշագործ գործությանը նվիրված առասպելները⁷⁸. կամ ինչպիսի մանրամասնությամբ է շարադրում Եղեսացիների՝ հերանոսական

⁷⁵ Նույն տեղում, գլ. 309: Հմմտ. նաև գլ. 473:
⁷⁶ Նույն տեղում, գլ. 421:
⁷⁷ Նույն տեղում, գլ. 515:
⁷⁸ Նույն տեղում, գլ. 423—424:

ծիսակատարություններ հիշեցնող զանգվածային ողբի ու աղերսանքի պատմությունը⁷⁹:

Ինչ վերաբերում է Անանունի երկի գրական առանձնահատկություններին, ապա պետք է նշել, որ այն աչքի չի ընկնում գեղարվեստական արժանիքներով: Դա մի շուր, դեպքերի պարզ շարադրանք ներկայացնող ժամանակագրություն է, որի հեղինակը նիգ չի թափում անգամ ունի վայելչությունն ապահովելու ուղղությամբ: Հանախակի են բառերի, դարձվածքների կրկնությունները, ֆերականական անհամապատասխանությունները և այլն: Այդ պատճառով երկի թարգմանությունը կապված էր որոշակի դժվարությունների հետ՝ հատկապես հայերեն շարադրանքը լեզվական անհարթություններից զերծ պահելու և ասորական բնագիրը հարազատորեն վերարտադրելու տեսակետից:

* * *

Սույն աշխատությամբ հայ ընթերցողին է ներկայացվում Անանուն եղեսացու «Քաղաքական ժամանակագրության»՝ շուրջ երկուհարյուրամյա ժամանակաշրջան ընդգրկող վերջին մասը, որը նվիրված է սելջուկ թուրքերի տիրապետությանը և խաչակրաց արշավանքներին⁸⁰: Հավելվածում ամփոփված են հայերին վերաբերող այն տեղեկությունները, որոնք տեղ են գտել «Քաղաքական ժամանակագրության» նախորդ գլուխներում և «Եկեղեցական ժամանակագրության» պահպանված հատվածներում:

Անանունը պատմական իրադարձությունները թվագրում է ասորական մատենագրության մեջ ընդունված սելևկյան տոմարով, որի սկիզբ է համարվում մ. թ. ա. 312 թ.: Սույն թարգմանության մեջ սելևկյան թվականների կողքին կլոր փակագծերով նշանակված են ժամանակակից թվագրության համապատասխան տարիները: Լուսանցքներում նշված են «ժամանակագրության» ասորական բնագրի հրատարակության էջերը: Աղբյուրագետ-պատմաբանների գործը հեշտացնելու նպատակով, ճանոթագրություններում նշել ենք Մատթեոս Ուտհայեցու և Գրիգոր Երեցի «ժամանակագրության» բոլոր զուգահեռ դրվագների էջերը:

Թարգմանության մեջ մեծ ուշադրություն ենք դարձրել անձնանունների տառադարձությանը՝ ձգտելով դրանք արտահայտել արդի գիտության մակարդակով և միաժամանակ չհրաժարվել ավանդական կարևոր սկզբունքներից: Խայտաբղետությունից և շփոթություններից խուսափելու համար տեղանունները հիմնականում վերարտադրել ենք միջնադարյան հայկական ձևերով (Ռապան *փ/ս*. Ռաբան, Թլպաշար *փ/ս*. Թելլ-Քաշիր և այլն):

⁷⁹ Նույն տեղում, գլ. 514—516:

⁸⁰ Chabot—II, p. 45—241.